



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



1999

ՎԱՐԱՐԱՆԻ  
ԿԱՅԾԵՐ



Կ. Պ Օ Լ Ի Ս  
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ա. Դ. ՊԱՐԻԶՊԱՆԻ ԵՒ ԲԵԿԲՐ

1875

# ՀՐԱՏԱՐԱԿԵԼԻ

Ա

ՄԱՆԿՈՒՆՔ

Գ Ա Խ Ա Ն Ի Զ Ա Պ Ե Լ

ԳԵՐՈՐԳ ԵԿ ՆՈԽԱՐԴԻ




ՇԱՀՔՆՆ Ի ՍԻՊԻՐ

ԿՈՄ

## ԳԱՂԹԱԿԱՆ ՀԱՅԸ

ՀԱՏԱԿԻՆ ՈՒՐ ՍԻՊԻՐՆ ՈՒՐ

92101-60  
30.9.105



ՎԱՐԱՐԱՆԻՄ ԿԱՅԾԵՐ

ԳԱՐԱՐԱՆԻՑ ԿԱՅԵՑ

ԿՈՄ

Մ Ա Ս Մ' Ի Մ

Հ Ի Ն Խ Ա Ղ Ե Բ Ի Ց

~~~~~

1806 |

Ս. | ՏԵՐ ՍԱՐԳՍԵՆՑ



Կ. ՊՈԼԻՍ

Տպագր. Ս. Ղ., Պարտիզանեան Ել. ընկերք

1875

Զ'արժեր երկար խօսիլ արդէն երկու տող գործի մ' վրայ :

« Վառարանիմ՝ կայծեր » ը՝ իմ մտքի և սցը-ափ բնատիպ նախընձայ պատկերն է, զոր այժմ ՚ի մի հաւաքելով կը համարձակիմ Սզբային գրական հրապարակն հանել :

Ինձ այնպէս կը բռի, անոնք որ մարդկային կեանքի՛ վիճակի և բնուրեան պատմաբնիքերը երբեմն իրենց մտածութեանց առարկայշնանձ են, չի պիտի անզունեն այս անի առողջը : Խոկ անոնք, որ զիրք միայն ժամանելու համար կը կարդան, քեզեւու բրրից ու բան-բանեն զիս, քե ինչո՞ւ լաւ նորութերջ ուսանուորներ չեն իւ հաշեւը, և ու բանաստեղծական շողջողուն բառերով սպանզարդեալ : Սակայն ես այդ բանբաներն ալ ինձ բաջայերութիւն կը համարիմ . վասն զի զեր միանգամ կարդալին յետոյ պիտի բանբանեն :

Ե՛ն կարդալ միայն բառական եր գրական մարդ մ' բացայերել :

Ո՞րչափի շատ բաջայերութեան պիտք ունի մեր գրականութիւն :

Ո՞վ զիտէ՛ ի՞նչ մեծ միտքեր եւ նրաշալի սիրտեր կան անձանօր անկխններու մեջ բաշուած

կծկուած , խարոյիներ՝ որ կը ծխան ու կը մխան ,  
և առանց փանկելու կը մարին կանցնին , ո՞վ պի-  
տի կայծ մ' հաղորդէր ասոնց . . . :

Հաղորդէլ կայծ մ' ձնշեալ մտքերուն , կայծ  
մթմրած սրտերուն , կայծ մ' կործանեալ նոզինե-  
րուն , կայծ մ' ՚ի խաւարի խոր բուն խորդացո-  
ղաց . . . :

Ի ԽՈՐՈՅ ՄՐՏԻՑ ԽՕՍՔ ԲԵԴ  
ԱՍՏՈՒՇՈՅ

ՕՐՀՆԵցէ՛ք զանուն մեծին Աստուծոյ ,  
Եւ բարձր արարէք յիշատակ նորա .  
ՕՐՀՆԵցէ՛ք զանուն Սրբոյն բարձրելոյ ,  
Եւ մեծարեցէ՛ք զանուն Սուրբ նորա :

Ո՛ՎԵ՛ որ գնայ խրճիթ աղքատին ,  
Սփոփել նորա ցաւեր լշտագին .  
Ո՛ՎԵ՛ որ գնայ որբին եւ այրուն ,  
Յուսագրել զնա կամ տալ օդնութիւն :

Ո՛ՎԵ՛ որ բանայ սրտերն՝ երկաթէ  
Դոնով կղպանքով վակուած մարդկանէ ,  
Ո՛ՎԵ՛ որ կարգայ սրտերու մատեան  
Եւ ըստ պահանջման կուտայ պատասխան :

Ո՛ՎԵ՛ որ մտնէ արդիւեալ վայրեր ,  
Մարդկային օրէնք , բանտեր շղթաներ  
Ո՛չ մտիկ կընէ եւ ոչ կարգիւուի ,  
Աղատ կը լսէ , աղատ կը խօսի :

Ո՛ՎԵ՛ որ թռչի խռովեալ յովկեան  
Փոթորկեալ նաւուն լինել ապաստան ,

Ո՞վ է որ համնի ծով ինկած մարդուն ,  
Ուժ կուտայ անօր թոյլ բազուկներուն :

Ո՞վ է յուսադրող ծանր հոգեւարքին  
Յորմէ կըսպասին յոյսեր մարդկային ,  
Որու կը դիմէ նա վերջին վարկեան՝  
Վերջին յոյս մ' խնդրել , յոյս մ' աղատութեան :

Ո՞վ է որ զաշխարհս այս վշտից ծփանք  
Կը բարեխսանէ , մոռցնէ զրկանք ,  
Ո՞վ է ո՞վ է այն որ մինչեւ անդամ  
Կը քաղցրացնէ յիշատակ մահուան :

— Մեծին Աստուծոյ մեծ Ան՛նինն է այն ,  
Որ կառավարէ զընկերական կեանք ,  
Առ որ կը դիմնն յուսահատք համայն  
Յուսալ , սպասել խուն մի սփոփանք :

Ո՞վ ազգ եւ աղինք , դո՞ւք որդիք մարդկան ,  
Ծունը կրկնեցէք բարերար անուանն ,  
Օրհնեցէք զանուն մեծին Աստուծոյ  
Եւ բարձր արարէք զնա յաւիտեան :

Օրհնեցէք եւ դո՞ւք նիւթապաշտ մարդիկ ,  
Որ զմեծն Աստուծ ծաղրել յանդգնիք .  
Գէթ սպատկառեցէք յանուանէ նորա ,  
Որ անյոյս մարդոց է միշտ զօրաւիք :

## ՅԻՇԵՆՔ ՄԵՌԵՏԼԱԵՐ

Օրհնեալ մինիս Դու Գրիստո՞ս ,  
Որ եղար յոյս մեռելոց .  
Ի գերեզման թէպէտ նա  
Պաղունց մի հող կը գառնայ՝  
Բայց մեր որտին մէջ կապրի  
Թէ օր մ'անշուշտ կը յառնի :

Ո՞վ աւելի քան գֆեղ  
Յարութեան յոյս տուաւ մեղ ,  
Սոկրատն արդեօք Պդասո՞ն  
Թէ պերճախօս Կիկերոն .  
Ո՞չ ո՞չ մի մարդ մահացու  
Չիսոից ընդ մեղ ինչպէս Դու .  
Ո՞չ ո՞չ մի մարդ մահացու  
Չ'կիսցաւ զմարդն ինչպէս դու .  
Որ մեր պատիւ արժանիք  
Բարձրացուցիր մինչ Երկինք :

Ո՞վ չ'գիտեր եթէ բան  
Մարդոց մնար միմիայն ,  
Գերեզմանէն ալ անդին  
Կենաց մի՛ յոյս չունէին .  
Մինչդեռ պէտք եր վերստին

Ծնանիլ եւ կեալ՝ ի յերկին .  
Երկրի վրայ ի՞նչ ունինք  
Որով մնաք դոն լինէինք ,  
Նրջանկութիւն , արդեօք կեա՞նք ,  
Սակայն դոքա են պատրանք .  
Դոցա առջի գասարան  
Ե այս կենաց փոքր շրջանն .  
Որոց անուն լոկ կուսնինք ,  
Բայց իրօք ոչ մին չունինք :

Թող չ'խաբէն մեր աչքեր  
Պալատներու դարպաններ ,  
Անոնք մարդոց զրկանքէն  
Կանգնած մեծ մեծ բանտեր են .  
Խակ անոր ճոխ բնակիչն  
Զոր մնաք կարծենք երջանիկ ,  
Կալանաւոր մ'է ստոյգ  
Եւ խուժանի մի ստրուկ .  
Մտի՛ր նորա սրտի մէջ  
Կ'աւեսնես որչափ ելեւէջ ,  
Ի՞նչ ողեսպառ խորհրդով  
Կալեծիի քանց դժով .  
Արտէն արիւն կը գնայ  
Եւ երանի կը կարդայ  
Լերանց աղաս հովիւն ,  
Նորա չարքաշ խեղճ կեանքին :

Բայց եւ հովիւն խակ թշուառ ,

Հետաքննին անդադար ,  
Աչքերն յերկիր՝ միտքն երկինք ,  
Փնտոէ մի կեանք երջանիկ .  
Մարքէն կանցնի , կերադէ  
Օր մ'օրանց թագւոր լինէ ,  
Կ'ձեւէ չափէ առանձին  
Անհարինք կը լինին  
Եւ վայ կուտայ իւր բաղդին :

Չէ՛ չէ , ոչ մի վիճակ , ոչ մի կեանք  
Զեն ճշմարիտ սփոփանք ,  
Ամէնքս մէկէն գժգոն ենք  
Երջանկութիւն մ'կը վնտուենք .  
Կ'վնտուենք այնչափ մինչեւ որ  
Գերեզման մի կը գտնենք .  
Ուր կայօր հովիւն միասին  
Հողու հաւսար կը լինին ,  
Որով ամէնքն մէկ վախճան  
Եւ մէկ վիճակ կըստանան :

Խակ այն անձուկ դրանէն  
Պէտք է ամէնքն անցանեն .  
Եւ այն որ լոյս մ'հետն առաւ  
Կ'համնի կենաց անզրաւ .  
Եւ այն կեանքն է ճշմարիտ  
Եւ այն կեանքն է երջանիկ :

Եւ ապացոյց այդ կենաց  
Հատ են խորհուրդք մեր մտաց ,  
Որով մի կեանք կ'որհնենք  
և Այսու կենօք դժգոհ ենք .  
Դժգոհութիւն է պայման մ'  
Հասնիլ կենաց դոհութեան :

Մեր արժանեադ կը դոդչի  
Ասել թէ կսանք կըսպասի ,  
Մեր մտաւոր զարգացման  
Կ'զագրի թոփչն անսահման .  
Թէ չէր 'ի մեղ հոգի անման  
Զէինք վնառեր կեանք անման .  
Անհանութիւնն կը վնառէ  
Զանմահութիւն'ար դանէ :

Թէ երկրաքարշ միտք մոլար  
Ընդ մեղ չլցէ յայսմ յօժար ,  
Թող նորա յոյսն ու վախճան  
Սպասի մնայ գերեզման :

Իսկ մեղ հետ դան վշտացեալք  
Որբ եւ այրիք եւ զրկեալք .  
Առնենք խունկ մոմ հաւատքով  
Գնանք ողորմիս հանելով ,  
Մեր մնուելոց յիշատակ  
Միշտ նորոգենք համարձակ ,

Որ նորոգուի մեր յոյսեր  
Եւ սիսփուի ծանր վիշտեր .  
Այսպէս յուսով թող կապուինք  
Խորհրդաւոր այն շիրմին ,  
Զոր թէպէտ մահ դառնացոյց ,  
Այլ Քրիստոս զայն քաղցրացոյց :

### ՄՏԱԾՄՈՒՆՔ

ԻՄ ՍԻՐԵԼԵԱՑՍ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԹԻԻ

Է՞՞ քանի որ վերջ գերեզման կայ  
Մարդոց երես ծազր չիդար .  
Մարդիկ ամէն միշտ հիւանդ են ,  
Խնչո՞ւ ինչո՞ւ իրարու հետ  
Շատ փափկութեամբ չվարուին .  
Մարդիկ լուռ մունջ որոջներ են  
Որ կտրճի՝ մահուան առջեւ կը քալեն :

Եւ ամէն մարդ իւր զոհարան կ'տեսնէ .  
Կ'տեսնէ պապ , մամ , մայր եւ հայր  
Իր կին զաւակ եւ եղբայր ,  
Աչքին առջեւ կը գնան

Սպանդարան կը մտնան ,  
Ուր իր գութ , սէր , խինթ յոյսն ամէն  
Ամէնքն ալ հոն կը թաղուին :

Մարդիկ զասոնք կը տեսնեն  
Յեաս նահանջել կարող չեն ,  
Զի այդ ուղին միայն յառաջ  
Գնալու արհեստով է շինուած :

Եւ մինչ խեղճ մարդն իւր սիրելեաց  
Մահուան վրայ նոր ելաց ,  
Ահա ինքն ալ իր ոտք այդ փոս  
Զգեց գնաց . . .  
Օհ՝ կատակով կուղանք յաշխարհ ,  
Ողբերգութեամբ կընթանանք ,  
Եղերգութեամբ կ'վերջանանք :

• • • • • • • • • • • • • • • • • • • • • •

• • • • • • • • • • • • • • • •

Կետաղեալ տողերը նաև պարտասորեցան :

## ԶԳՈՒՇ ԻՄ ՊԱՐՏՅ

Այն որ իմ տուն եւ իմ տեղ ,  
Բաժին եւ կեանք հայրենիքս  
Խլեց յինչն ,  
Եւ արար զիս անմշան  
Եւ տարագիր եւ ստրուկ ,  
Միշտ անիրաւ է՝  
Թէպէտ պալատ ինձ չնորհէ ,  
Ոսկով շքով զիս շոյէ ,  
Բայց այդ չնորհ  
Ապաշնորհ ,  
Որ զոհի զարդ է .  
Կ'արհամարեմ եւ բապաւ ,  
Կ'զգուշանամ նարանդ ,  
Որպէս զառ զայլից ,  
Եւ կընտեմ ինձ պատոյ մահ ,  
Քան զրկողի չնորհած կեանք :

• • • • •

## Ի ՅԻՇԱՑԱԿ Խ. ԱԲՈՎԵԱՆԻ

Պերեղմանդ կորած ,  
Աչքից հեռացած ,

Առաքից մոռցուած .  
Դու լիքդ անլեզու ,  
Աշխարհս անիրաւ ,  
Ոչ ոք չհարցուց  
Թէ խեղճ Աբովիանն  
Ո՞ւր գնաց կորաւ :

Ո՛չ սուրբ յիշատակու  
Սերտել կարացին ,  
Ո՛չ քարէ արձան մ'  
Վրադ կանգնեցին :

Արդեօ՛ք Հայաստանի  
Վերը պատմող մարդուն  
Սրտի թոքի մէջ  
Զարկեցին թաշոյն :

Երեւանի բե՞րդն  
Արդեօք քեզ ծածկեց ,  
Թ'ապէրախտ չըազդան  
Քեզ մունջ կուլ տուեց :

Արդեօ՛ք Սիպերիոյ  
Խաւարին երկիր  
Սունջ՝ խեղդ ըրին  
Քեզի տարագիր :

Արդեօք մեռա՞ծ ես ,  
Թէ գեռ կենդանի ,  
Հիւսիսի սառոյցք  
Դեռ ոտքդ կը չափի :

Արդեօք Արջային ,  
Բեւեռի վրայ  
Կանգնած կը խորհիս ,  
Թէ ե՛րբ կը կենայ . . . :

1806.

Ո՛չ ո՛չ Աբովիան ,  
Վնչ որ ալ լինիս .  
Դու կենդանի ես .  
Թէպէտ եւ իսպառ  
Կորած կըսեն քեզ :

Եթէ արդելին քեզ օդ չի չնչել ,  
Զոր Աստուած տուեր էր քեզ անարդել .  
Եթէ զրկեցին Քեզ Հայրենիքէդ ,  
Ընտանիքդ եւ ազգդ խլեցին զրկէդ .  
Եւ եթէ վաղ եւս մարմնոյդ փոշիներ ,  
Տիեզերքի մէջ ցրուեր կօրսուեր .  
Ո՛չ ո՛չ Աբովիան դու կենդանի ես ,  
Խոսքով ու հոգով մեր սրտի մէջն ես .  
Եւ մարմնոյդ մէն մի փոշիի վրայ ,  
Հշմարիտ Հայու սրտէ արձան կայ :

Ազօթէ՛ երկնից , որ քո փաշիներ ,  
Եթէ Աբովիան չե՞ն յարուցաներ .  
Թող Նալբանդ եաններ շնորհէ Հայ ազգին ,  
Որ մեր ազգութեան անհաշտ թշնամին .  
Երբ աղուէ սէն կը փախչի ,  
Կիստ գայլերուն հանդիպի .  
—Մանկաբ'ք Հայոց ասացէ՛ք ,  
Ամէ՛ն , ամէ՛ն եղիցի :

Որ պարզերես համարձակ .  
Օրօրոցից ուխտուած ,  
Եւ զահով սրբուած ,  
Կրնամ ասել ,  
Ազգ եւ Աղասութիւն .  
Զահնեմ ձեր սիրոյն :

## ՆԱԼԲԱՆՏԵԱՆՑԻ ՈՒԽՏԸ

Ազգ՝ եւ Աղատութիւն ,  
Օրօրոցից ուխտաւոր .  
Մայրս զիս մատաղ ձեզ խոստանց ,  
Ես այն օրից ճամբայ ելայ ,  
Սպանդարան գնալ ուղիղ ,  
Ուր մեր ազգութեան գահինք .  
Խնձ սպասում էին ,  
Զոհագործելով զիս ,  
Ազգասիրութիւնս քաւել :

Այս՝ այս՝ չեմ դրժեր ,  
Մօրըս ուխտերը .  
Կատարում եմ իր կտակ ,

Գողն երբ տունէն կը լինի ,  
Եղն երդիքէն կը հանի .  
Հայ ազգ վնասողն՝ Հայն եղաւ ,  
Սուտ ասողն է անիրաւ :

Այնչափ իրարու միո կերանք ,  
Արիւն խմեցինք .  
Որ չոր սակոր մնացինք ,  
Դեռ չզգաստացանք .  
Ել ի՞նչ պատիժ կուզենք .  
Ամէն բան վրան տուինք .  
Անհայրենիք ան ազգի ,  
Սորուլ դերի մնացինք :

— 20 —

Ինկեր գոնէ դուռ ,  
Յաշխարհէ աշխարհ .  
Մոլորաչըիկ կը թափառինք .  
Ամէն քարն իւր տեղ դադարեր ,  
Մենք ենք գլորուեր .  
Ամէն հաւքն իւր բոյն է դտեր ,  
Մենք ենք մոլորեր .  
Ամէն բոյսն իր արմատն ձգեր ,  
Մենք հողէն խլուեր .  
Օձն իւր պորտով ,  
Հաւքն իւր թեւով .  
Մեղ չեն համներ ,  
Մեղ չեն դաներ :

Ուր ոտք գնենք ,  
Իշ սահինք ,  
Ուր ձեռք ձգենք .  
Դատարկ կելնենք :

• • • • • • • • • •

Խոկ մինք դեռ եւս անզդուշ ,  
Չ'ասեմ յիմար եւ ապուշ .

Որչափ փորձանք կրեցինք ,  
Ոյնչափ անփորձ մնացինք :

~~~

## ՄԵՐ ՀԱՅՐ ՍՈՒՐԲ

—

Փառք քեղ Աստուած ,  
Տարին անցաւ  
Վանքի խուցէն  
Դուրս եկաւ  
Մեր ճղնաւոր վարդապետ ,  
Նարեկ Սաղմոս դրեր ծոց  
— Աւետարանն ալ պէտք չէ ,  
Կրօնաւորացս այսչափ բաւական է .  
Ժողովրդեան քարոզել  
Դժոխուք եւ արքայութիւն  
Եւ որ մեծն է ողորմութիւն  
Յետոյ , յետոյ հոգեբաժին ,  
Եւ կողոպրատ եւ պտղին  
Առնել շուտով վանք դառնալ .  
Ուտել խմել , Ազգն օրնել :  
— Գնա՛ գնա՛ մեր Հայր սուրբ ,  
Աստուած քո բան յաջողի :

Աստուածառաք վարդապետ

Սարերն անցաւ , ձորերն անցաւ ,  
Առաջադրեալ գեղն հասաւ .  
Ի՞նչ դպրում իրար անցում  
Մեր շինական ախտէրները  
Հրեշտակ տեսան թէ՝ Աստուած .  
Որը՝ ձեռք կ'առագնէ  
Եւ որը փէշեր երես քսէ .  
Իսկ մեր Հայր սուրբն անվրդով  
Աստուած օրհնի պահպանիջի ,  
Ծրարը բացած ,  
Պոլ պոլ կ'բամնէր աննախանձ :

Երեկոյ էր նստան սեղան ,  
Մեղք , կարաղ , սէր մածուն .  
Եւ ծուազեղ խուրուղուն ,  
Ամեն տեհէն բան մը կուղար  
Տարին ամբողջ իրենց չկերած ,  
Ճիժալիժերու բերնէն կտրած ,  
Կառնեն բերն Հայր սուրբին ,  
Որ գժոխքէն փրկուին :

Կերաւ խմաւ . բերան սրբեց  
Մեր նուիրակ վարդապետ ,  
Եւ ջերմնուանդ հոգոց մասաց  
Զայն սեղան պատրաստողաց  
Ննջեցելոց կենդ անեաց ,  
Եւ ամենքն միարերան  
« Ամէն » ասին , ձեռք պագին :

Այսուհետեւ մեր Հայր սուրբ  
Տերան բացաւ , նախ հարցուց ,  
Թէ ինչպէս են պահք ծովի հետ ,  
Ժամ կը գնան , աղօթք կանեն .  
Ապա սկսու նիարագրել ,  
Այս սոսկալի գժոխոց գործիք .  
Մազի կամուրջ , կարէ կարաս ,  
Եւ թէ ինչպէս մեղաւոր մարդ .  
Մազէ կամուրջէն կանցնի ,  
Մազ կը կարի եւ մեղաւորը .  
Կարէ կարսի մէջ կինկնի ,  
Անդ , զինքն դեհնեն .  
Եւ որդն ան-եռ ,  
Կ'լափէն կ'ուաեն .  
Բայց չի մեռնիր ,  
Մակայն արդարն անվտանգ .  
Կանցնի մազէն , կերթայ գրախտ :

Իսկ գու տեսնես .  
Խեղճ ունկնդիր դեղացոց .  
Սրտակուոր լաց ու կոծ ,  
Ծեր երախայ , հարս պառաւ  
Միահամուռ ծունկ չողած ,  
Հայր սուրբի բերնէն  
Թափած բոց կը սկէն ,  
Կուրծք կ'ձեւեն ,  
Արտօսր կ'թափէն :

Հաստ չանցաւ ,  
Հաւար եկաւ , գումար հասաւ ,  
«Հասէ՛ք Ատոմն սպանին .  
Եզներ , խարոր թալնեցին » :

Գոռում դոչում փոխուեցաւ ,  
Ճիչ վայնասուն սաստկացաւ .  
Ամինքն մէկին պօռացին ,  
—Հա՛յր սուրբ , քո ոտաց հողն ենք .  
Ասա հիմայ ի՞նչ անենք ,  
Ել հէրիք չէ՞ , էլ հէրիք չէ՞ .  
Մեր սուրբ տաճարք պղծուին ,  
Մեր առագաստք Ակուին .  
Մեր կեանք , վար , ցանք օտարին ,  
Մենք մարդ ենք թէ անասուն .  
Խօ՛ Աստուած գերի չ'ստեղծեց մեզ  
Թողութիւն առւր , էրթանք զարնենք .  
Եդ անդրաւ դաշանուեր ,  
Որ ո՛չ Աստուած  
Ո՛չ մարդ օրէնք  
Ո՛չ թագաւոր չեն ճանչնար .  
Ամա՞ն , եա՞ման հերիք քաշենք ,  
Էլ հերիք է մեռած ապրենք .—

—Պահ մ'կեցէք օրհնեա'լուր ,  
Գոռաց Հայր սուրբն հանդարտէ՛ք .  
Աւետարանն ի՞նչ կասէ ,

Սպահանիցեն դձեղ .  
Եւ հալածեսցեն վասն իմ» :

Աակայն ամբոխն անհանդարտ ,  
Հա՛յր սուրբ . Ատոմն սպանին .  
Աւետարան ո՛ւմ կարդաս ,  
—Կարծես թէ առանց մարդոյ .  
Աւետարան պաշտօն ունի —  
«Հոդ չէ որդի՛ , թող սպանեն .  
Սպանանող գժոխք կերթայ ,  
Սպանուածներ նահատակ են .  
Գոմոաց մէկը ցեխոտած ,  
—Հա՛ անպիտան աստուածարան .  
Ուրեմն մարդիկ ինչո՞ւ ստեղծան —

Որչափ , խուժան վրդոված ,  
Մաս մ'օգնութեան կը վազէր .  
Սակայն շտաեր հնազանդեցան ,  
Մազէ կամուրջ կարէ կարաս .  
Գժոխքի վախէն սարսափած :

Անդրէն գարձեալ սկսաւ ,  
Խաղաղութեան մեր Հայր սուրբ .  
Հնազանդութեան , համբերութեան ,  
Խաղաղութեան պատուէր կարդալ .  
«Ալ Քրիստոս , ալ առաքեալ ,  
Ալ մարդարէ չի մնաց .  
Ամինքն վկայ կանչեց խոսքին ,

«Որ սուր առցէ , սրով անկցի .

Մի՛ հակառակ՝ կալ չարին ,

Եւ զշապիկն թող նմա :

Ապա սկսեց միսիթարել ,  
Համբերեցէք զաւակներս ,  
Այս մեր մեղքի պատուհասն է ,  
Որ մենք գերի ծնած ենք ,  
Պէտք է տանինք մենք սիրով  
• • • • • • • •

Եւ շատ ո՞ւ այս կերպ պարկեշտ խրասով

Մեծահաւատ ուամկութեան

Չեռք , ոտք , միտք , սիրտ կապկապեց ,

Ամենքն լքան , ամենքն թուլցան ,

Ատոմի մահն մոռացան :

Միւս օր չայր սուրբ պիտի գնար

Վերջին խրատ մ'ալ խօսեց ,

Ողորմութիւն էր բնաբան

Որչափ նարեկ Աաղմոսի մէջ

Ողորմութիւն բառեր կար :

Մէկիկ մէկիկ մէջ բերաւ .

Մինչև տարաւ հոն կապեց

Որ կողոպուտ եւ պտղին

Կարքաւ խօսքի մէջ մտան

Եւ շինեցին վերջաբան :

Այնուհետեւ իւրաքանչիւր  
Ա՛վ ինչ պարտ էր զայն բերաւ ,

Այրի կրիկ մ'ալ եկաւ

Երկու որբիկ իրեն հետ

Արինթաթախ զգեստ ձեռք ,

« Հայր սուրբ , ա՛ս ալս կողոպուտ ,

Հոգոց մ'ասա՛ Ատոմիս »

Ասաց ինկաւ մարեցաւ :

Իսկ մեր Հայր սուրբն

Եւ զայն առաւ ,

Ճամբայ ինկաւ շտապաւ :

— Վարձքդ կատար մե՛ր Հայր սուրբ ,  
Երթաս բարով Տէր ընդ քեզ ,  
Եկաղ տարին չմոռնաս զալ :

Հե՛ռի հե՛ռի ինձանից

Մոլորութեան մտածմունք ,

Թէ վրկութեան մեզ չիք յոյս .

Զէ՛ , չէ մենք արդէն իսկ աղատ ենք ,

Մեր կղեր այս ճամբով : . . .

## ՀԱԽԱՏԱՐԻՄ կ ԱՆԻՆ

Եկան Նինոս Շամիրամ ,  
Բարիլոն Նինու էն կանգնեցին .  
Կիւրոս Կամբիւս մի ելան ,  
Այդ մեծ շենքեր քանդեցին ,  
Եւ ասորոյ գերեզմանի հող ըրին .  
Այս շրջանն միշտ կը փոխուի ,  
Կարգն ուրիշին կանցնի :

Ելաւ Աղեքսանդր անդիէն ;  
Եօշ եւ Մծբին գրաւեց .  
Կիւրոս Գարեն Քսերքսէս ,  
Արեաց քաջերն սպառեց .  
Զի շրջանն միշտ կը դառնայ ,  
Կարգն ուրիշի մի կուգայ :

Այսպէս կորան Քարկեդոն ,  
Քիւցազն Անիիրազ մնաց տակ .  
Եկրատանայ Այտանի ,  
Բարձաւ իսպառ յիշատակ .  
Զի շրջանն միշտ կը փոխուի ,  
Կարգն ուրիշին կանցնի :

Որչափ մեծմեծ քաղաքներ ,

Փլան ազգեր թաղեցին .  
Հռոմ , Աթէնք , Բիւզանդոն ,  
Հին կերպ , հին տէր փոխեցին .  
Զի շրջանն միշտ կը փոխուի ,  
Կարգն ուրիշի կանցնի :

Անկաւ նա եւ Հայաստան ,  
Քաջի պէս նա յանդեաւ .  
Զի բազմացեղ դիւցազանց ,  
Դիմագրելով վերք առաւ :

Այժմ Հայաստան այն քաջի  
Դրօշակի տակն է ինկած ,  
Որ Եւրոպա , Ասիա , Ափրիկէ  
Եւր ձեռք պարզած կը տիրէ ,  
Որոյ զահի տակ խոնարհ ,  
Կննջեն մեծ տիեզերակալ  
Կիւրոս , Աղեքսանդր , Անիիրազ :

Իսկ մեր Անին հաւատարիմ  
Մնաց իւր բուն Տէրերուն ,  
Բարիլոնի Բիւզանդի պէս  
Տեղ չ'տուաւ թշնամոյն ,  
Սիրեց աւերակ նա մնալ  
Քան շինեն զինք ձեռք օտար .  
• • • • • • • • • • • • •



## ԿԱՐԻՎԻ ՍԻՐՈՅ ԿԱՐՈՅՆ

Ջմի՛ո շուտով մի՛ անցնիր  
Շարունակէ քո բուքեր ,  
Զիւնով սառով միշտ ծածկիր ,  
Դաշտ եւ հովիտ եւ լեռներ .

Քանի որ ես կարիպ եմ  
Թող ուշանայ միշտ զարունն .  
Վարդ ու սոխակ ինձ պէտք չէ ,  
Մինչեւ գառնամ ես իմ բոյն :

Հատ գարուններ անցուցի ,  
Կարօտ մնալով Հայրենեացս .  
Հատ գարուններ անցուցի ,  
Հեռու սիրոյս անձկայրեաց :

Աէրս չէ կարող առանց զիս ,  
Գարնան վայելք վայելել ,  
Ես չեմ կարող առանդ նա ,  
Խաղաղութիւն մի դանել :

Օտար երկի գարուններ ,  
Ինձ սեւ օր են սեւ զիշեր .  
Կեանքս անկեանք կանցնի ,

Որչափ երկրէս մնամ հեռի :

Պլպուլն գարուն ի՞նչ անէ ,  
Երբ նա իր հետ վարդ չունէ .  
Վարզը զարունն ի՞նչ անէ ,  
Երբ որ պլպուլն եկած չէ :



## ԵՐԱՆԻ ՔԵԶ ԹԻՉՈՒԻՆ

Թռչո՛ւն քանի՛ աղատ ես ,  
Աղամորդու վրձակէն ,  
Թռչո՞ւն քանի՛ անմասն ես ,  
Մահկանացուի բաժակէն :

Ծանր վիշտեր ու հոգեր ,  
Կապեր է զիս կապկապեր ,  
Թեւս ու թիկունքս մկրատած  
Օտար խրճիթ մ'է ձղած :

Երբ կուտեմնամ քեզ աղատ ,  
Կանցնիս դպոնաս երդիրէս ,  
Կու նախանձիմ շատ ու շատ ,  
Արիւն կու գնայ յիմ որտէս :

Կերթաս կուգաս աղատ ևս ,  
Աշխարհ արեւ կու տեսնես .  
Ես քանց քեզ մեծ արարած ,  
Դյայտ կեանքից եմ զրկուած :  
• • • • • • • • • • • • •

Թռչուն որ ինձ կարեկցեալ ,  
Յերակս ՚ի վար հայեցար ,  
Շատ չնորհակալ եմ քեզնից ,  
Քանց էրկնուց լուս արեւից :

Քանց էրկնուց բարկ արեւից ,  
Շատ չնորհակալ եմ քեզնից ,  
Նա թող ինձմէ խռովմէ ,  
Ինձմէ մէկ շող ինայէ :

Ել չեմ կարող բան խօսիլ ,  
Ել չեմ կարող սիրտս բռնել . . .  
Թռչուն բարով դու երթաւ ,  
Հայաստանին բարեւ տաս ,  
Դու զիմ զընտան չի մոռնաս :

•••••

## ՊԱՆ ԱՍՏ ԿԱՆՏՈՒ

Ո՛ , բարով եկար հաղար բարով ,  
Հայրենակից իմ կատու .  
Ցիշեցեր զիս թէ մերթ առ իս  
Ի տան մերում մնայիր .  
Արդեօք ինքնին ելեր ինձ յայց  
Թէ այր անդգամ վարեաց քեզ  
Ի Վանայ աստ ի նիւզանդ :

Ուրախ եմ յոյժ ընդ գալուստ քո  
Եւ ընդ տեսիլլ ,  
Որով յիշեմ զիմ Հայրենին ,  
Սակայն անէծք այն ձեռաց  
Որ զքեզ իւլեաց ի հող ջրոյդ  
Եւ աստ ձգեաց միայնակ .  
Ուր ոչ լոր դոյ որսալոյ ,  
Այլ մլունք ահեղք քան զքեզ :

Ուր ոչ կատուք փռչոտ մազոտ ,  
Այլ լերկ , տգեղ նախանձոտք :

Այդպէս ո՛վ իմ այցելու հիւր ,  
Համանման ձեռք բռնակալ  
Տարաշխարհիկ արար զիս

Յափշտակեալ զՀայրենեաց ,  
Եւ զազդային իրաւունս ,  
Խակ քո թէպէտ չեն Հայրենի ժառանդութիւն ,  
Եւ ազգութիւն եւ կրօն ,  
Կամ իրաւանց ազատութեան գաղափար ,  
Ցաղադս որոյ հալածական լինէիր ,  
Այլ քեղ տեսլեանդ  
Հաճոյս շարժեալ անզգամի ,  
Աստ վարեցար :

Աղէ՛ զի՞նչ քան դհաճոյս ,  
Սադրող վարող զբոնաւորս .  
Այդ անզգամ հաճոյից  
Զոհն է իմ ազգ եւ ես խակ ,  
Որ այս սենեակ դոնփակ  
Պարաւանդիմ միայնակ :

«ԿԱՐՈԼԻԿԱ ԵՄ» ԻՆՉ ԵՎԱՅՑ Է

Քան մը կայ բան մը չկայ ,  
Զարմանք բան է մտիկ արա .  
Հայ է , Հայ չէ ,  
Մարդ է , մարդ չէ .

Կենդանի է , կենդանի չէ ,  
Ատքեր գլուխ մարդու է .  
Քիթ ու բերան Հայու է :  
Կոտրառուանք բնութիւն Ֆռանսայու

Խելք ու միտք Հռոմի պապուն ,  
Լեզուն ասես Տաճկին .  
Բայց ինքնն իրօք ոչ մէկին :

Այս կենդանին  
Արիւն ու միս , ոսկոր ունի ,  
Խրեն հարցնես մարսին չունի ,  
Խոկ երբ ըսես դու ի՞նչ ես  
— Կաթոլիկ եմ կըսէ քեդ .  
Կաթոլիկ եմ ի՞նչ եղայ է :

Հա՛ հասկցայ ըսել կուզէ  
Մարմնաւորեալ կրօնք է :

Չէ եղրայր չէ , այն ալ չէ ,  
Աղորդն ասեմ  
Իր ազգութիւնն ուրացող է .  
Անհայր անմայր զաւակ է :

## Խ Ո Ս Տ Ո Վ Ա Ն Ա Կ

Սի Վեհափառ Տէր շքեղ պալատում  
Անխիզ հաճոյից հետ առանձնացած  
Նքնախօսութիւն էր անում այսպէս ,  
«Ի՞նչ որ կամեցայ ինչ որ ասացի

Եւ եղեւ այնպէս :

Իշխել ցանկացայ ամենայն բանի ,

Եւ եղեւ այնպէս :

Կամեցայ լինիլ մեծ քան գրնաւո ,  
Ասացի մարդիկ սարուկ դերի են ,

ևս նոցա կինաց եւ մահուան իշխող

Եւ եղեւ այնպէս :

Հաճոյքիս համար հրաման արարի

Զանազան մահուամբ մարդիկ սպանել ,

Աւրախ կամ արտում , դէմքիս փոփոխմունք

Պէտք է որ լինի բազմութեան համար

Մինն կենաց չնորհ , մինն մահուան պատիմ ,

Եւ եղեւ այնպէս :

Թէ պատահեցաւ ընդդէմ իմ կամքին

Եւր աղասութիւն պաշտպանող ամիսոխ ,  
Նորա ազգ , կրօն հայրենիքն ամբողջ  
Սի փոշիի պէս չնշելու համար ,  
Հրաման արարի իմ ստրուկներուն  
Որ այրին զրկեն եւ որքն կողոպտեն ,  
Նոցա այն զրկանք կողոպուտներէն  
Թնդանօթ ձուլեն , հրացան պատրաստեն ,  
Եւ եղեւ այնպէս :

Եւ ժողովրդեան հարց եւ մարց որդիք ,  
Զամենն իմ կամքի ներքեւ կանչելով ,  
Պէտք է ասացի կամ ամբողջ մեռնիք ,  
Կամ մեռուցանեք այն ժպիրհ ամիսոխ  
Որ կը վրդովի՛ հաճոյքիս զբօսանք :

Բիւրք բիւրոց մարդիկ դաշտերում փռուած  
Սպանողութեան արհաւրբներով  
Լեցուաւ տիեզերք ,

Խակ ես անայլայլ

Զքսոնում էի լցեալ հաճոյքով .

Զի այն բազմութեան նշանակութիւն  
Խնձ թուէր այծ մի կամ սատկած մի շուն .  
Սիայն թէ լինէր հաճոյքս անխոռով ,

Եւ եղեւ այնպէս :

Ցուկերաց մարդ կան դահոյքս շինեցի  
Ապանուած դիւրէն պալատ մեծաշուք ,  
Այսպէս ցանկացայ , որպէս զի մարդիկ

Դողով սարսափով յիշեն իմ անուն ,  
Եւ ակնածական մեծ մակտիրներով  
Ասեն ինձ տէր , կայսր , իշխան , վեհապետ ,  
Ինչպէս կամեցայ , ինչպէս ասացի  
Եւ եղեւ այնպէս :

Սակայն այսչափովս չլեցուիր բաղձանքս ,  
Թէպէտ եւ ինիմ ամենուն իշխող ,  
Կամ մարդիկներու մէջ առաւելութեամբ  
Անհամեմատ ճոխ անհաւասար բարձր ,  
Այլ հաճոյքս միայն իշխել է իշխել  
Եւ դարձեալ իշխել , նորանոր իշխել :  
Եւ եղեւ այնպէս :

Ի՞նչ պակաս մնաց աստուած լինելէ ,  
Որդէն փառք , մակտիրքս ճիշդ վկայումն  
Թէ ես չեմ լոկ մարդ հաւասար մարդկանց ,  
Չի զոր ինչ կամիմ , կարող եմ փռնել :

Մէկ բան կայ , մէկ բան .

Ավաս' ա ինչո՞ւ չկրնամ իշխել եւ բնութեան ,  
Հասարակ մարդոց կազմուածքէն տարբեր ,  
Յաւելուլ ինձ ձեռք կամ մի այլ նոր աչք ,  
Կամ չկրել այն ինչ , զոր կրեն մարդիկ .  
Հապա այն որ ի ժամու եւ տարաժամու  
Բանէ տանէ զիս վայր անարդանաց  
Յոյց տալ ինձ անդ զիշխանն իշխանաց • • •  
Գէթ յաղթել մահու լիբր իշխանութեան

Որ զիս հաւասար կառնէ սարկիս ,  
Որչափ կամեցայ , որչափ ասացի  
Օ՛ֆ , չեղեւ այնպէս :

## ԿԱՏԱԿ

Կարիճ զօրաւոր ,  
Սիրելի զինւոր ,  
Արեւդ կը սիրես  
Ճշմարիտն ասես ,  
Փայլուն ու սուր  
Այդ մէջքիդ թուր  
Վախցնելո՞ւ թէ  
Չվախնալու համար է .  
Վա՛յ թէ վերջինն է  
Գէշ քաջութիւն չէ ,

• • • • • • • • •

## ԽՆԴԱՆՔ Թէ ՑԱՀԻՒՆՔ

Չեսէ՛ք այս ինեղճ զինուորին  
Հրացան մ'զրեր է ուսին .

Արձանացեալ կայ յոտին .  
Մարդ Աստծու  
Խնդրեմ հարցու,  
Կ'նքն հրացանին  
Թէ՛ հրացանն իրեն  
Կ'հնազանդին :

— Խեղճն ի՞նչ դիտէ  
Որ ինչ ըսէ ,  
Բան մ'է կընէ  
Թո՛ղ տուր ընէ ,  
Լուսաւոր դարուս  
Հրամանն այնպէս է :



Երկու տաք գլուխ մարդ իրար մէջ  
Յ.յ ինդրի վրայ կընէին մեծ վէճ .  
Ախալա՛ր ախալա՛ր աս ինչպէս բան է  
Մեր լուսաւոր դար կարծես խաւար է ,  
Մարդասպանութեան ճարտար գործիներ  
Որ աւուր վրայ կ'առնեն մեծ քաղլեր :

Մեր շուն կատուներ թէ որ իմանան,  
Մեղնից սարսելով պիտի հեռանան .  
Մարդ որչափ լուսաւորուի  
Կարծես այնչափ կը կատղի .  
Ամօթ մեղի չա՛տ ամօթ ,  
Որ կտոր մ'երկաթ  
Շատ յարդի է քան զմարդ :

Մեղայ Աստուծոյ ըսէ  
Ասաց մէկան զարմացմամբ ,  
Այդ հայհոյանք է .  
Լուսաւոր դարուս իշխանն  
Բարոյականն է միայն ,  
Երկաթ մարդկան տէ՛ր կընես ,  
Մարդուս պատոյն կը դպչես :

— Այս խօսքի վրայ  
Կուշտ մ'ինդացի  
Քնէս վեր թռայ :

ԱՆՄԵԴ ԶՈՀԵՐ

Մէծ մեծ բանակներ երկու թշնամեաց ,  
Զիրար ջարդելէ քիչ մ'հանդիսա առած .

Մէկ այս կողմէն միւս այն,  
Երկու սոսկ զինուորական  
Հետաքրքրութեամբ  
Իրարու եկան .  
Եղբօր պէս զիրար բարեւեցին ,  
Եւ այս խօսք բացին ,  
  
Մին հարցուց մէկալին ,  
Դու ի՞նչ պատճառաւ  
Թողեր ամէն բան  
Ելեր հոս եկեր  
Կեանքդ վտանգի մէջն ես դըեր :

Ի՞նչ , միթէ չե՛ս զիտեր՝  
Պատասխանեց դիմացին ,  
Թէ զրկեալն իր իրաւունքն  
Պաշտպանելու է ելեր ,  
Մեր թագաւորն ապրած կենայ ,  
Երբ պատերազմ ըստ կայ .  
Ըստ թէ դուք  
Մեր իրուունքն  
Կուզէք եղեր  
Ունակոխ ընել :

Ի՞նչ կըսես եղբայր  
Պատասխանեց մէկալլ .

Ճիշտ եւ մեր կայսրը  
Ըստ մեզ նոյն բան ,  
Արդարեւ զարմանք:  
  
Արդ եթէ երկուքս մէկանց  
Տէր ենք իրաւանց  
Ո՛վ է մեր մէջն անիրաւ :

Սատանի ականջ խուլ ,  
Զ'ըլլա՛յ մեր երկու գլխաւորներ ,  
Ով զիտէ ինչ բան իրար մէջ անցեր  
Աշխարհս այսպէս տակն ու վրայ են ըրեր .  
Տօ՛քո ըստ շատ ճշմարիտ է  
Վրայ բերաւ միւսն շուտով  
Ասոնք իրենց ծուն եփիլու համար  
Կրակի տուած են զաշխարհ ,  
Մեզ էլ խարեր խազլրեր են  
Եշ նահատակ պիտի անեն :

Մէնք իրարու վնասած չենք ,  
Մէնք իրարու հետ դործ չունինք :

Այս խօսքն ասեն թէ չասեն ,  
Հրացաննին մէկ կողմ զրին  
Իրարու զիրկ նետուեցան  
Անուշ անուշ պազտուեցան .  
Հաշին այսպէս դոցեցին թէ չէ ,

— 44 —

Դարձեալ հնչեցաւ շեփողն կրկին պատերազմին,  
Անմեղ զինւորք բաժնուեցան  
Գնացին իրենց բանակ մտան .  
Եւ պահ մի ետք  
Երկուք մէկէն  
Մեռած լնկան  
Ճիշտ իբարու դնտակէն :

— Առ քեզ ծանր ինդիր  
Բան չունիս զայրացիր ,  
Գոնէ վերջին դատաստանին  
Հետաքրքիր ըլլանք տեսնենք ,  
Թէ այս երկու զինւորի  
Խնդիրն ի՞նչպէս կը լուծուի :

~~~~~

## ՆՈՐ ԽԱՅ

---

Անիրաւ ոսկին  
Ցաղթեց բուն խաչին .  
Հին խաչ փայտէ էր ,  
Արտի պարծանք էր .  
Խոր խաչ ոսկի է ,  
Խոկ կուրծքի զարդ է :

Հին խաչ կրողներ  
Պատառաւն ձորձով  
Ընկերի համար  
Զոհուող մարդիկներ  
Եխն անդադար ,  
Խոր խաչ կախողներ  
Խշան սրբազան  
Մեծ մաս մարդասպան  
Անսուրք մարդիկ են :  
Քրիստոսի կապիկներ՝  
Հռոմի Պապեր  
Առկի խաչի միջոցով  
Լուացին այս աշխարհք  
Մարդկանց արիւնով :

Հաւատացեալ Վիլիկինի ,  
Վարպետորդի Պիզմարգի  
Զեռքովն արդեօք  
Որչափ խաչ-նշաններ  
Բաժնուեցան մեր օրեր ,  
Անոնց որ լաւ խաբեցին ,  
Լաւ լրտեսեցին ,  
Լաւ սպանեցին .  
Միթէ այս խաչէն  
Զէ՞ր փայլէր արդէն  
Յուանսացոց կուրծքէն .  
Խաչ՝ խաչին հակառակ  
Խաչ՝ խաչին յաղթանակ,

Օ՛հ , Տէր Յիսուս  
Խաչի խարդախեցին  
Կայսարականի մարդիկ :

Հին խաչ թէ գիտենք  
Ուկի ականց հետ  
Ծանաւանդ սուրի  
Բնաւ գործ չունի ,  
Այն խաչ վրկութեան  
Քրիստոնեայ տէրութեանց  
Չեռքն այժմ դարձեր  
Խաչ սպանութեան ,  
Խաչ իշխանութեան ,  
Բաղդի խաղերուն  
Խաչ վարձք յաղդութեան :

Եհ գէշ չէ ,  
Եթէ այսպէս երթայ  
Տէ՛ր քեզ կրկին դաւ  
Հարկ կըլլայ ,  
Խաչի առնել  
Հետդ տանել ,  
Հերիք է հերիք  
Խաչիդ անունով  
Լեցուի այս աշխարհք  
Ծանր ոճիրներով :



## ԱԶԱՏԱՄԻՑ ԱՌԻՍՄ

Օր մ'օրանց  
Չասէք հապա  
Մեծ հրաշքի  
Հանդիպեցայ ,  
Շատ զարմացայ ,  
Մի Ռուս մարդ  
Այնչափ ազատ  
Կը խօսակցէր  
Պարզ Հայում' հետ  
Ես կարծեցի որ անիկայ  
Ամերիկացի մի ըլլայ .  
Թէ՝ մենք Ռուսներս ,  
Կըսէր Ռուսիկա՝  
Գիտէ՞ք ինչու  
Աղդութիւններ կըլլել  
՚Ի մի կուզենք ձուլել .  
Որպէս զի երբ մարդիկ համայն  
Մարդկային ազգ մ'ձեւանան ,  
Այն սկզբանց  
Մեծ օդնութիւն մ'  
Բլլանք ըրած ,  
Հարիւրաւոր միլիոնով  
Մէկանց դառնանք

Եւ այն խնդրին  
Շուտով վերջ տանիք :

Ե՛ , հէ՛ , հա՛ ,  
Զ'ասես հապա  
Մտիկ անող  
Խեղճ Հայն չզիտէր :

Թէ խիստ կծու  
Սոլիմ մի հետ  
Բռնուած էր :

Ազատամիտ է ասինք  
Վարպետ նուռակիս ,  
Եւ Խաչ ծոցէն հանեցինք ,  
Գիտէք մարդուս  
Միտքն ի՞նչ էր  
Կամ այս խօսքով  
Ի՞նչ ըսել կուղէր ,  
Կուզէր համայն  
Մարդկային ազգ  
Բուս ըլլայ  
Եւ գործն այսպէս  
Վերջանայ :

— Ապա դու ի՞նչ կարծեցիր ,  
Առած մ'կայ

Միթէ սոխին  
Աղէկն կըլա՛յ

ԷՇ ԿԵՐԱՆ ՊՈՉԻՆ ԽՌՈՎԱՆ

Հայկական առած

Քամիթի պէս ձայներ կանցնին ականչէս  
Թէ՝ դերութիւն կը ջնջուի աշխարհքէս  
Առաջ այս հով ջուանի , Խնկլիզ  
Ամերիկացիք փչեցին .  
Կարգն էկած... զզլպաշ մինչեւ անդամ Մօնկոֆին:

Իմ խելք չ'համնիր թէ ի՞նչպէս այս  
Տիրող ազգեր խոնարհին ,  
Շէնքով չորքով մարդիկներու կարգն անցնին :

Հէ՛ հէ՛ մաղ մնաց գլուխնիս երկինք կը համնի ,  
Մարդ ասկից մեծ ալ ուրիշ ի՞նչ տարտ ունի :

Զ'խաբուինք ախալէ՛ր , այդ չոկ մոխիր է  
Կը փչեն մեր աչքին ,  
Որ չ'տեսնենք անոնց խոշոր յանցանքնին .

Կաքաւի պէս ծածկուած կարծեն  
Գլուխնին ձեան մէջ պահելով ,  
Բողորովին դուրս կեցած են  
Ետևնին բաց թողնելով :

Իրաւէ որ մարդ մ' կազատեն  
Գերութեան ծանր շղթայէն .  
Բայց այդ շղթայն անդին ամբողջ  
Աղջի ճտէն կախած են :

Այս ազգեր չե՞ն՝ որ քանիմ հատ  
Ազգեր ունին հպատակ .  
Եւ հպատակ միթէ չհեծե՛ր  
Ճիշտ դերիի բեռան տակ :

Այս՝ այս՝ ատոնց միայն  
Առկ անուններ տարբեր են .  
Եսկ դիրքեր եւ պաշտօններ  
Ճիշտ նոյն են :

Եթէ իրաւ Տիրող ազգեր  
Այնչափ պարկեշտ եղած են ,  
Որ ամէն մարդ թէ հաւասար ,  
Եւ թէ ազատ կընդունեն .  
Թո՛ղ թո՛ղ ետ տան ամէն ազգի  
Ազատութիւնն առանձին ,  
Որ անոնք ալ երթան իրենք

Իրենց եղով տապկուին .  
Խսկ եթէ մարդ մ' գերի ընել  
Իրենց խղճին կը դպչէ ,  
Սակայն ազգեր գերի պահել  
Բնաւ երբեք հոգեր չէ .  
Ես ալ կ'ասեմ այդ ֆռանկին , Խնկիլիզին  
Եշեր կուտեն , թող պոչերէն չ'խոռովին :



## ԵՅ ՅԱՌԱՋ ԵՆՔ ԳՆՈՒՄ

Ամենայն ինչ յառաջ կը գնայ  
Կ'ասեն ինձի շատ մարդիկ ,  
Ամենայն ինչ յառաջ է դնում ,  
Եւ աշխարհ նոր , եւ մարդիկ նոր  
Լաւ ուղղութեամբ կը վարուին :

Յառաջադէ՛մ կեցիր պահ մի ,  
Մա՛ճապարեր լոկ ցոյցով .  
Ետեւդ Հայի՛ր դու անդամ  
Արժանիքիդ քո չափ տես ,  
Եւ թէ ո՛րչափ յառաջ ես .  
Ովքե՛ր են դոքա քո ճամբու վրայ  
Զոր դու նոր ուղղութիւն կանուանես :  
Ուր կը տեսնեմ տակաւին

Սի կարդ անկեալ մարդիկներ ,  
Զորս դու երբէք չես տեսեր  
Եւ աչքդ խփած յառաջ ես գնում  
Եւ չողոքորթում ես յառաջզիմութիւն :

Սի մանկամարդ այրի կին  
Երեք փոքրիկ որբ ունի ,  
Մինն չորս տարու մինն երկուք  
Միւսն տակաւին ամսական ,  
Ո՛չ հայ պատրաստ եւ ոչ լաթ  
Ո՛չ տուն ունի եւ ոչ տեղ  
Ո՛չ խնամատար օգնական  
Ապրում են ցարդ հանդիպմամբ .  
Խոկ դու երբէք զասոնք տեսա՛ր  
Ազորմե՛ցիր միանդամ  
Այդ քեզ նման մարդերուն :

Փողոցի մէջ կայ այլ մարդ մ'  
Նօթի ծարաւ վակիթիում .  
Պատճառ այն է որ կոյր է ,  
Որպէս թէ կոյրն ալ մարդ չէ ,  
Խնամեցի՛ր այդ մարդուն .  
Որ օգնութեան կարօտ է ,  
Ո՛չ , այլ միայն կրկնում ես  
Յառաջ գնանք , յառաջ են գնում :

Յառաջ եւ դու ծեր պառաւ  
Այս որոտումն չե՞ս լսեր .

Աշխարհ յառաջ կը դնայ  
Խոկ դու փակուած քո տան մէջ  
Երբէք տեղէդ շարժ չես դար :

Այս պառաւիկն քիչ մ'առաջ  
Օրիորդ էր գեղանի ,  
Արահարի մ' հարս եղաւ ,  
Զորդիս ծնաւ մեծացուց  
Եւ ամէնից պատուումէր  
Երբ ինքն անոնց պէտք ունէր .  
Խոկ երբ սորս այրը մեռաւ  
Եւ որդիներ կորսուան ,  
Յետոյ եւ ինքն ծերացաւ ,  
Ո՛չ մէկ չ'ձանչեց այլ եւս զինքն ,  
Այնուհետեւ անխնամ  
Անկար աղքատ ինկաւ տան .  
Չարչարումէ խեղճ պառուիկն  
Անարդւումէ մարդոց մարը . . .  
Տէ՛ն պառաւիկ յառաջ զնա՛ . . .

Յառաջա՛դէմ գիտցիր չափս  
Պատսպարէ նախ զասոնք ,  
Որ մարդ կութեան լրումն են ,  
Ապա թէ ոչ հակառակ  
Միշտ բանը ասում եմ զքեզ ,  
Թէ քանի որ տկարներ  
Անօդնական մնում են ,

Առ'ւտ է յառաջդիմութիւն ,  
Առ'ւտ է կատարելութիւն :

Դ Բ ԱՌ Մ Դ Բ ԱՌ Մ

Չըրամ', ով որ քեզի հնարեց ,  
Նա զաշխարհ շինեց , նա զաշխարհ քանդեց .  
Եւ անհատական կապ  
Եւ ընկերական կեանք  
Զամէն փոփոխեց , զամէն խարդախեց :

Ո'վ զրամ երբ քեզ ստեղծին ,  
Մարդկանց արժանիք քեզ վերադրեցին .  
Ո'վ զրամ դու հոգի ես հոգի ,  
Ով որ քեզ չունի  
Ո'չ կ'չնչէ ո'չ շարժի .  
Եւ որի քով շատ գտնուես  
Ոտնէն ի վեր զայն կը փոխես .  
Նա թէ ախմար է , զիտուն կը գառնայ :  
Նա թէ տղեղ է , գեղսն կերեւի ,  
Նա թէ խլստ չար է , բարի մարդ կըսուի ,  
Նա թէ անպատիւ , պատիւ կըստանայ ,  
Նա թէ կատու է , առիւծ կը լինի :

Դու համերց կուտաս խօսել  
Եւ կոյրերուն տեսանել .  
Դու Աստուծոյ հետ կը մրցես ,  
Եւ մերթ քան զայն յառաջ կանցնես :

Դրամ' դրամ' դու մարդն ըրիր թշուառական  
Ազատ հօգին դրիր զընաան ,  
Աստուծոյս սկիզբէն վեր ,  
Ամէն կակիծ , ցաւ եւ լացեր ,  
Մեծ մաս քեզմով յառաջ եկան ,  
Թո'ղ , թո'ղ ամէնքն անէծք ըլլան  
Վրադ թափին հետդ վերջանան :

Եւ գայ այն դար խաղաղական ,  
Յոր նահաապետք կապրին միայն ,  
Եւ փառք պատիւ մենավաճառ  
Զնջուի , եւ սէր տիրէ յաշխարհ .  
Եւ մարդն գանէ իւր արժանիք  
Եւ արժանիք փոխարինուին  
Փոխան հողէ անարդ դրամին :

Է՞ն , Լիքուրկոս մի պէտք է ,  
Որ այս ամէն պատրաստէ .  
Պէթ մեր զրամ կարգադրէ ,  
Մեր սեղաններ յարդարէ :

ՆԵՐԿԱՅ ԴԱՐՈՒԽ ՊԱՐՈՒՆԵՐ

Պնցեալ դարեր չեն հաւնիր  
Ներկայ դարուս պարոններ ,  
Լիքուրկոսի պէս մէկ մարդ  
Դեռ չկրցին դուրս հանել :

Խեղճ Ֆրանսան դարերով  
Արքնշաղադ կը լինի .  
Քանի՛ տարի շարունակ  
Հաւասարապետութիւն  
Նա վայելեց անխռով :

Թող մեր քեօմին ախսէրներ ,  
Կարծեն նոր խելք մտածեր .  
Իրենց ամէն ընելիքներ  
Նախնիք ըրեր անցուցեր են ,  
Նոր բան հնարել կարո՞ղ են :

Ապա թէ ոչ լուռ ու մունջ  
Թող կոռափինին զլուխնին քաշեն ,  
Ի զուր երկինք կը ճանկուտեն ,  
Ի զուր ոտքեր քետին կ'զարնեն ,  
Հերիք զլուխ ուռեցնեն :

ՈՒՐ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Աղատութիւն կ'պահանջեմ  
Իբր սեփական իրաւունքս ,  
Աղատ ամէն ճնշումից  
Աղատ ամէն զբկանքից ,  
Եւ շուրջս կը հայեմ ,

Զիս կապկապած կը գտնեմ :

Ազատութիւն , ազատութիւն ,  
Վերացական գաղափար .  
Ով քեզ դրաւ իմ միջում  
Որ քեզ վնասեմ , քեզ չ' գտնեմ :

Ի բաց 'ի բաց կաց յինէն ,  
Մոլար ավամար մտածմունք .  
Այս գերութեան աշխարհում  
Որոյ ապրերք բոնական են ,  
Ազատութիւն չիք մարդուն :

Բայց եթէ մի օր կայ  
Որ ինչպէս կասեն  
Հոգին առանձին կ'ապրի ,  
Տե՛ս անոր ըսելիք չունիմ .  
Գուցէ գուցէ այն օր միայն ,  
Նշոյլ մ'առանձինք ազատութեան ,  
Սակայն եւ այդ ո՞վ գիտէ :

•••••

## ԵՐԱԾՈՎԱՐ ԱԳԼՈԲ

Մեծ տան տիկին հրամայեց  
Որ շուտ ազլօր մի մորթեն ,  
Զրի վրայ վլաւ ձգեն .  
Խոհարարն էր զագլօրն բոնեց ,  
Գանակ գիւլ էր ,  
Քիչ մ' սրեց պատրաստեց .  
Այս միջոցին ազլօրն ասես  
Այնպէս պոռար կը ճշվար ,  
Որ ձայն երկինք կը քանդէր :

Զայն տան տիկնոջ ականջն հասաւ  
Զի հասաւ  
Աիրտ շարժեցաւ .  
Եւ երբ գանակն  
Վզին դրած  
Հոգին բերան էր հասած .  
Բոպէ մը ետք  
Անդիի աշխարհ  
Պիտի երթար  
Ազլօր ախպար ,  
Տան տիկին շուտ  
Վրան հասաւ ,  
Հրաման ըրաւ

Մի՛ մի՛ մորթէք

Պէտք չէ վիլաւ .

Եւ խեղճ աղլօրն

Հողեղարձ եղաւ :

Ես այս անցըին ներկայ էի .

Եւ ինք իրենս մտածեցի .

Ո՞՛ Աստուած իմ ,

Որչափ մարդիկ

Պատերազմի դաշտի վրայ

Ջիբար ջարդեն կը փողոսին .

Սակայն ատօնց բռնաւորներ

Հանգիստ նատեր մաֆկ կընեն

Մահուան ձայներ ,

Եւ կարծես թէ իրենց համար

Նուագ կածեն .

Եւ այդ մարդկանց արիւնով

Փլաւ կուտեն անխռով :

ՓԱՌՔ ՔԵԶ ԱԳԼՕՐ

Պառք քեղ աղլօր ,

Քո չնորհիւ

Իմ կեանքի մէջ

Բանաստեղծի

Առի պատիւ ,

Մինչեւ անդամ

Շորոյար մ'ալ

Ընծայ առի ,

Եւ քո կենաց

Կերայ գնաց :

Իմ աղատած աղլօրիկ ,

Քեզի չափ մարդիկներէն

Ես բարեբաղդ երջանիկ :

Մինչեւ ցայսօր

Մարդկանց վրայ ,

Ես գրեցի մրեցի ,

Շոքոլաթ չէ

Կորեկ մ'անդամ

Ընծայ չառի :

Շոքոլաթ մի ընծայ առնել

Ուրա՛խ եղէք հեղինակներ ,

Այսուհետեւ Զեր արժանիք ,

Պիտի յարդեն մեր չայ մարդիկ :

## ԱՅՆ ՈՎ Ե

Գեղեցկութեան աշխարհէն  
Հրաշք ինկեր այս երկիր ,  
Նա լոյս , հուր է հրեղէն ,  
Մահկանացուի չի նմանիր .  
Նա մերթ հուր է , հրդեհող  
Նա մերթ ջուր է , հուր մարող :

• • • դրախտի  
Հիսրի փերին կը նմանի ,  
Ումնէն ի վեր գեղեցկութիւն եւ սէր է ,  
Տիւնեայ կիսզելին է ո՛վ է ,  
Ի՞նչ հոգեջան առնող է .  
Մերթ հրեշտակ է թափանցիկ  
Մերթ սատան է խաբուսիկ :

Հոնքեր ունի աղեղէ ,  
Աչկունք չերակի նետէ .  
Եերանն Վէսուվի հրաբուղիս ,  
Եւ կը զարնէ եւ կայրէ :

Հերուսակին այդ ճարպիկ  
Սրտերու գող է սաստիկ .  
Ո՛վ որ անսիրտ մնալ կուզէ ,

Թող երթայ զայն մէյ մ'տեսնէ :

Այս հրաշալի արարած  
Մեր պապերու հին աստուած  
Աստղիկն չըլլայ եկեր է ,  
Մեղ նոր կրօնք բերեր է .  
Կարելի է ո՛վ գիտէ  
Ով որ զանի կը տեսնէ  
Աւ ուրիշ բան կը պաշտէ :

Մի՛ նախանձիք  
Ազգ եւ ազինք ,  
Զեղի ըսեմ  
Այդ հրաշալիքն ,  
Է չայ աղջիկն :

Մեր չայ աղջիկն  
Որսի ելեր  
Վահագնի ձօն՝  
Սօսեաց անտառ .

Յինքն ձգէ  
Ծնտանի որսեր ,  
Կը հարուածէ  
Գաղանք օտար :

Եւ դիցուհիք

Հայոց պաշտպան  
Անահիտ Աստղիկ ,  
Են միշտ իրեն դօրավիք :

ԵՒԱՆԻ ՚Ի ԴՐԱԽԱՑ ԵՒՅԱՆԻԱՐՀ

Արարչագործն Աստուած ,  
Երբ զԵւան հրաշագործեց ,  
Ալ հրաշալիք չի մնաց ,  
Ամէն անոր վրայ թափեց :

Արեւ լուսին ՚ եւ աստղեր ,  
Անոր համար նա ստեղծեց .  
Առանց անոր , անոնք ամէն ,  
Մէկ մէկ սեւ սեւ ըիծեր են ,  
Անոնք ամէն Եւայի աչաց մէկ կայծն են ,  
Եւ ծիածան անոր հոնից ստուերն է .  
Եւ Արշալոյն անոր այտից ցոլումն է :

Իրաւ Եղեմն սքամնչելի ,  
Թէպէտ լի էր վարդ սոխակով .  
Ազրանց արիւն եւ դինարբուն ,  
Եւ Մանիշակ մեխակներով .

Եւ անոնց վրայ կիշնար ,  
Մարդարտացողն առաւօտեան .  
Եւ անոնց վրայ չնչէր ,  
Նազիկ զեփիւռն տլեծածան .  
Բայց Եւայի կուրծք շուշանադաշտ ,  
Երբ Ադամայ սիրոյ յիշատակ .  
Կը դպրէր անոր ներս դին ,  
Զինչ գոյն զգոյն կը բացուէին  
Վարդաթերթերն մարդարտալիր ,  
Եւ երբ հրաբորք սիրտն ՚ի տրոփ ,  
Կ'շարժէր զայն դաշտն հիանալի ,  
Կարծես զեփիւռ մ'այն մարդարիտք ,  
Ադամանդի կը փոխարկէր .  
Յայնժամ ծաղկունք Եղեմին .  
Կորդլուխ յամօթ լինէին ,  
Եւ սատանան գուցէ հրեշտակք .  
Ընդ բաղդ Ադամայ մախային ,

Իսկ երբ Եւան դրախտէն ելաւ ,  
Կնոջ պաշտօն ստացաւ ,  
Այնուհետեւ սկսաւ ,  
Աշխարհ անոր վրայ դառնալ .  
Կնոջ համար մեծ պալատներ շինուեցան ,  
Կնոջ համար եւ մեծ թաղեր փշրեցան :

Կնոջ պատճառաւ է արդ միայն ,  
Հրասպարակի մէջ խուժան

Կիյնան կայնեն , կեռան զեռան .  
Իրեւ խոռվածալ ովկիան :

Առանց կնոջ վայելչութիւն , աէք չ'կայ ,  
Աշխարք գժոխք , մարդ սատանայ կը գառնայ:

Առանց կնոջ եւ բանաստեղծն  
Անձայն քնար , անկօս արձան կը լինի .  
Բայց եւ անով քարն՝ աշուղ ,  
Փայտ՝ գուսանի կը փոխուի :



### ԱԱՅ ՊԵԼՊՈՒԽԻՆ

## ՋԱՐԴԻ ԶՈՐ ՇԽԻ ՎՐԱՅ

Վա՛խ իմ թոռմած չորցած վարդս ,  
Է՛ր ստեղծար , է՛ր թոռմեցար .  
Եթէ չէիր քեղ չէի տեսներ ,  
Քեղ չէի սիրեր , քեղ չէի ցաւեր .  
Դու եղար ինձ միսիթարանք  
Դու եղար ինձ օթեւանք ,  
Ինձ դու տուիր երդ , խաղ եւ տաղ ,  
Սյժմ չորցար՝ չորցուցիր զիս .  
Սիրան մեւցաւ լեզուս կապօւաւ  
Խաղեր տաղերս վերջացաւ :

Ել չեմ օրհներկու  
Այլ բողոքարկու  
Առ այն ,  
Որ գեղեցիկն  
Տղեղացնել չի խպճեր :

Է՛ր կըստեղծէ , է՛ր կապականէ .  
Զիս ուրախ կառնէ , ու կուլացնէ ,  
Ես վարդ չուզեցի  
Նա ինքն ինձ տուաւ ,  
Ես չի մնրմեցի , ընդէ՞ր ետ առաւ :

Ո՛վ իմ վարդի Տէր ,  
Խնչու տուիր , խնչու առիր ,  
Ո՛վ ասաց քեղ տուր ,  
Ո՛վ ասաց քեղ առ .  
Այս ի՞նչ տեսակ չնորհ է ,  
Այս ի՞նչ տեսակ տուք եւ առ .  
Վա՛խ իմ թոռմած չորցած մարդս . . .



## ԳԱՆԳԱՏ ԾԻՌԵՌԱՆ

Առ'ւր երկի՞ն , ունկնդի՞ր երկիր ,  
Դատ առնել զիս , ընդ սսովիս :

Արարածոց բնական սիրով  
Յղացայ եւ ես ձագ մի սիրոյ ,  
Յիս կրելով ամիսս հոլով :

Ապա տնակ պիտոյ էր մեղ ,  
Որ զձադիկս պատսպարէր .  
Այլ ի վերայ եւ ցող եւ սէղ ,  
Այլ ի վերայ եւ ջուր եւ կաւ ,  
Որով տնակս պատրաստիւր ,  
Եւ զամէն այս կտցաւ պիտէր :

Հարիւր ճդամբ , հազար քրտամբք ,  
Շատ դժուարաւ սուկեցի տունս ,  
Բայց երբ ի լոյս բերի ճադուկս  
Անպատում էր ուրախութիւնս :

Եւ օրն ողջոյն թռիչս առեալ  
Ըսդ սար ընդ ձոր կոլորտէի  
Հատիկ մ'փնտուել , կորեկ մ'գտնել  
Կտցաւս առնել վերադառնալ ,  
Եւ խեղճ ձագուկս կերակրել :

Եւ շատ օրեր եւ շատ սիրով  
Զիմ ծիծեռնիկ լինամելով ,  
Եւ նա ի նեւ եւ ես նովաւ ,  
Ուրախ եւ գոհ էինք անքաւ  
Մեր ստեղծողին փառս տալով :

Որպէ՛ս կարեմ պատմել այլ եւս ,  
Զի հաստատեալ թեւք ծիծեռանս ,  
Մինչ թռուցանել պատրաստէի ,  
Հողմոյ նման սլացաւ բազէն  
Առ զծիծեռնիկս , կորաւ անդէն . . .  
Ի սոյն ժամու եւ անդ կային  
Զոյգ մ'աբեղայ մի Սրբազան (<sup>1</sup>)  
Տեսին զայս դէպք ինձ չ'օդնեցին ,  
Գէթ գանգատիս վկայ լինին ,  
Այն անզգանք ծնողաց ցաւին :

Արդ լուա՛ր երկի՛ն ,  
Եւ գու ի միտ առ երկի՛ր ,  
Կամ օ՛ն եւ օն ար զրկող Բազէին  
Եւ դարձո զմահ իմ սիրելի ծիծեռին .  
Ապա թէ ոչ դղոդեմ զերկիր ես իրաւ  
Թէ երկինքն է անիրաւ ,  
Եւ թէ անմեղն՝ մեղաւորին ,  
Եւ ապլկարն՝ հզօրին  
Կեր պատրաստած է երկին :

(1) Ցիշեալ Ս. Հալքերը դեպքիս ականատես ,  
նոյն ժամուն իրենց պատամեցայ , պատմեցին ինձ ,  
եւ ըսին քէ կրնային բազէն արգիւել , բայց ան-  
տարբեր մնացեր իին , եւ այս դեպքի դատաստանն  
ինձ յանձնեցին , իսկ ես երկներին :



## ԱՆՆԻԲԱՂ ՅԱԼՔԵԱՆ ԼԵՐԻՆԸ

Եւ Աննիբաղ հրամայեաց  
Կարքեղոնցի բանակին ,  
Ելանել ի լետոն Ալբեանց .  
Խնդաց ընդ այս հրաման  
Անմատչելին Վէս Ալբեան  
Խըրեւ պարիսպ ամբարտակ  
Պահպանել Հռովմ զՍպանիան :

Կրկնեաց անդրէն Աննիբաղ  
Աստուածային իւր հրաման .  
Արծուի գարձան փիղք դանդաղ  
Զինւորք համայն թեւ առան :

Սրացաւ բանակն ի կատարն ,  
Ալբեան վախէն գարձաւ սառ .  
Խոկ Աննիբաղ շղթայեալ  
Սառոյցներէն անդ մնայր :

Մնայր գօրավարն շուտարեալ  
Զելս վտանգին նա խորհէր ,  
Ի զուր ի զուր ոդորէր  
Բանակն փրկել չէր հնար :

Երբ արտսուք աչերէն  
Առաջին անդամ կը վաղէր ,  
Նայից լերան բարձունքէն  
Խտալիան ծաղկեալ էր ,

Ընդ այն վիճակ մախացեակ  
Ակրջին հրաման մ'որոտաց ,  
Յորոտումէն կայծ եւաւ  
Ալբեանն ամբողջ փանկաւ :

Լուծան սառոյցք դարեւոր ,  
Քարինք իրը մոմ հալեցան .  
Յորդան տուեալ հեղեղատն  
Ողողել սրբել զիտալիան :

Ալբեան նայեց իւր վերայ ,  
Տեսաւ զինքն բարձր մինչ երկինք ,  
Նայեց տեսաւ զԱննիբալ  
Խըրեւ ճիճի մի վոքրիկ ,  
Պօռաց ըսաւ՝ Աննիբա՛ղ  
Մհ՛ծ ես , մի՛ծ ես դու քան զիս :



## ԱԳԻՒԱԻՆ ՆԱԽԱԽԵՆԱՄԵԱԼ

Յւ ձմեռն էր , 'ի կոճեղ գոս ուռենոյն ,  
Որ առ գետավն սառուցելոյ՝  
Ո' զիտէ յո՛ր ժամանակաց յաւխտենից ,  
Հապճեղ թռուցեալ ադռաւոյն .  
Գայր մտանէր բոտացեալ փոր այն ծառոյն .  
Ի ձուն ցրտոյ հազիւ զերձ  
Անդ հոգիս ապաստան անկանէր :

Անդ՝ ադռաւոյն՝ իմաստանէր  
Խորհուրդ ընդ միտն անցանէր  
Թէ զուռենին միայն իւր 'ի պէտս  
Նախտինամեալ էր յԱստուծոյ :

Իսկ երբ ձիւն ցուրտ անշնդհատ  
Տեղաց փչեաց շարունակ ,  
Եւ ադռաւոյն անդ փակեալ  
Մնայր անսուադ ընդ երկար ,  
Կամ մեռանիլ հարկ էր  
Գերեզման շնել զուռենին ,  
Կամ թռանել յանչէն լերինս  
Ի ցուրտ բուքէ անդր խեղդիլ :

Ընդ այս վիճակ յօւսահատ  
Մոռացաւ զիւր բարերարն  
Զուռենոյն մերթ նախախնամեալ  
Տրտունջ երարձ կիսաշունչ ,  
«Ուռենի՛դ դու , զի՞նչ չնո՞ն քեզ ,  
Թէ նախախնամեալ լինէիր  
Ոգեսլահ եւս ունէիր , »  
Մինչ զայս արտունջ մրմնջէր ,  
Անդրէն զոգի իւր փչէր :



# Վ Ր Ի Պ Ա Կ Ք

---

Երես	Սիմալ	Ուղիղ
5	Նախընձայ . . . . .	Նախընձայ
17	Հշմարիտ . . . . .	Ճշմարիտ
19	սակոր . . . . .	սակոր
22	սէր . . . . .	սէր
27	կղեր . . . . .	կղերի
43	կասեն թէ չասեն . . .	ասին թէ չասին
46	յաղդութիւն . . . . .	յաղթութեան
62	Հերուուհին . . . . .	Հերոսուհին



ՀՀ Ազգային գրադարան



NL0345684

